«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Սյուզաննա Կոստանդյան
Մանկապարտեզ՝ «Ալավերդի թիվ 4 մանկապարտեզ » ՀՈԱԿ
2023թ.

Բովանդակություն

Ներածություն……..էջ 3-4

ԳԼՈՒԽ 1 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթության մոտեցման համատեքստում.....էջ 5-7

1.1 Թեմատիկ ուսուցման միավորի պլանավորում.....էջ 8-9

1.2 Ինտեգրված ուսուցման արժեքը.....էջ 10

ԳԼՈՒԽ 2 Պարապմունքների կազմակերպումը.....էջ 11

Պարապմունք.....էջ 12-15

Դիտարկում.....էջ 16

Եզրակացություն....էջ 17

Հավելված..... էջ 18

Գրականություն.....էջ 19

Ներածություն

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, հուզական,ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նորանոր մեթոդներով մոտեցում՝ կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը:

Մանկավարժը կոչված է իրականացնելու մի շարք մասնագիտական գործառույթներ, որոնցից կարևորվում է ուսումնական պարապմունքների կազմակերպումը մանկավարժական գործընթացում: Դրանց շնորհիվ երեխաները ձեռք են բերում այնպիսի գիտելիքներ և հմտություններ, որոնք չեն կարող յուրացնել ազատ գործունեության ընթացքում: Այդ իսկ պատճառով ստեղծվել են ինտեգրված և համալիր պարապմունքներ, որոնք ժամանակակից ուսուցման մեթոդների նորություններից են: Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման միջոց և մեթոդ, իսկ համալիր պարապմունքի ժամանակ օգտագործվում են տարբեր տեսակի գործողություններ՝ արհեստ, արվեստ, մաթեմատիկա, երաժշտություն: Այդ պարապմունքներին սովորաբար նախորդում են թեմատիկ պարապմունքներ, քանի որ աշխատանքը հիմնականում հիմնված է երեխաներին ծանոթ նյութերի վրա:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների և երևույթների համակողմանի ուսումնասիրմանը գիտելիքների համակարգվածության, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքի նախապատրաստվելիս, դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից, որը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային հակասությունը՝ կենտրոնում,իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ինտեգրված ուսուցման և ուսուցման փոխգործուն ինտերակտիվ մոթոդի արդյունավետությունը՝ կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս: Իրականացնել տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորման, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրություն: Ժամանակակից պահանջներին համապատասխան, պարապմունքի կազմակերպումը՝

- Կնպաստի պրակտիկ գործունեության կատարելագործմանը
- Բովանդակային նոր մոտեցմանը
- Մեթոդների կիրառմանը
- Իրականցնելու, ձևավորելու երեխայի հոգեկան գործընթացը՝հիշողություն, ուշադրություն, մտածողություն,խոսք, երևակայություն
- Կապահովի միջառարկայական կապերը՝ տարբեր մեթոդիկաներից
- Կիրառել ինտերակտիվ քարտի մեթոդը:

Երեխան ունի տեսնելու,մտածելու,զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը:

Ժան Ժակ Ռուսո

Գլուխ 1

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

«Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում:Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորվում է որպես հեքիաթ,որի ստեղծողներն երեխաներն են: Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի՝ մյուս առարկաների հետ կապելով:Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան,բայց դա կատարեք այնպես,որ կյանքի այդ պատառիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույներով»:

Վ Սուխոմլինսկի

Մանկավարժության բնագավառի շարք տեսաբանների կարծիքով՝ ինտեգրված ուսուցումը երեխաների մեջ խթանում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորումը,դրանց միջոցով հնարավոր է դառնում ձևավորել կենսականորեն անհրաժեշտ տարբեր հմտություններ,հաղորդակցական տպավորություններով կիսվելու կարողություն և մշակույթ:

Ուսուցման գործընթացը փոխգործունեություն է,որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով,երեխաների և մանկավարժների փոխհարաբերությունների որակով:Մանկավարժները երեխաների համար պետք է նախապատրաստեն միջավայր,որտեղ նրանք սովորեն ակտիվ հետազոտության միջոցով՝ փոխգործելով մեծահասակների,երեխաների և նյութերի հետ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում,որը կարելի է իրականացնել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ(փոխգործուն) մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ:Դրանց միջոցով երեխաների հետ երկխոսություն և համագործակցություն է հաստատվում,ստեղծվում է փոխըմբռման մեթոդ,որի արդյունքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների,այլ ուսումնական գործունեության մեջ բոլոր երեխաների անմիջական ներգրավվման միջոցով:Այդպիսի ուսուցումը երեխային տալիս է լայն

պատկերացումներ, ստեղծագործական, տրամաբանական մտածողություն:Ինտեգրված պարապմունքներն արդյունավետ են, երբ անցկացվում են խաղային ժամանակակից մեթոդներով:Երբ նյութը լրացվում է խաղի միջոցով, ապահովվում է հուզական դրական մթնոլորտ, տրամադրություն, ակտիվություն:

Ըստ Մ. Մոնտեսորիի՝«Այն խաղը, որն ուսուցանող չէ՝ դատարկ խաղ է»:Երբ երեխան ուսուցանվող նյութը լրացնում է խաղի միջոցով,ապահովվուում են բարձր տրամադրությունը, հուզական մթնոլորտն ու ակտիվությունը:Դրանք այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի զարգացման համար:Այդ պատճառով էլ կարևորվում է ինտեգրված պարապմունքի անցկացումը:

Ն. Գավրիշն իր «Ժամանակակից ուսուցում» գրքում ըստ բովանդակության առանձնացնում է պարապմունքի հետևյալ ձևերը:

- Առարկայական կենտրոնացում
- Բազմակողմանի ուղղվածություն՝ ինտեգրված և թեմատիկ պարապմունքներ:

Ինտեգրված և թեմատիկ պարապմունքների ժամանակ առկա է գործունեության բազմաթիվ միջոցների խելամիտ կիրառում, որոնց առանցքային բովանդակության հիմքը մեկ թեմա է:

Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն՝ ուսուցման բոլոր փուլերում, որը նպաստում է կենտրոնացված ծրագրային նյութի յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ:

Թեմատիկ պարապմունքն ուղղված է ընտրված թեմայի շուրջ գործունեության այնպիսի ձևերի բացահայտմանը, որոնք փոխարինում են մեկը մյուսին: Այստեղ գործունեության մի ձևը փոխարինում է մյուսին և այդ հերթագայումն ակնհայտ է: Թեմատիկ պարապմունքներում կարևորում են սանի ինքնուրույն մտածողությունը, հնարամտությունը, անձնային կարգապահությունը, ապահովում երեխայի զարգացման մտավոր սոցիալ-հուզական, ֆիզիկական և էսթետիկական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված և թեմատիկ պարապմունքների նախապատրաստման համար անհրաժեշտ է հաշվի առնել պլանավորման հիմնական պահանջները.

1. Ընտրել թեման

2. Պլանավորել պարապմունքը, հիմնական նպատակն ու առաջադրանքները

3.Ըստ անհրաժեշտության փոփոխել առաջադրանքների հաջորդականությունը

4. Հստակեցնել պարապմունքների բովանդակությունը(վերլուծություն, ընտրություն, ստուգում)

5. Ապահովել նյութերը, որոնք ծառայում են պարապմունքի բուն նպատակին

6. Բացահայտել երեխաների բարեհարմար ծանրաբեռնվածությունը (մտավոր,ֆիզիկական,բանավոր գործունեություն և այլն)

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքին վերաբերող պահանջներն են .

- Թեմայի ընտրությունը
- Ուսումնական նյութի մասին նախնական տեղեկատվություն ձեռքբերում
- Ինտեգրվող բաղադրիչների ընտրություն(բնություն, գեղարվեստական գրականություն,երաժշտական ստեղծագործություններ, մշակութային կենցաղավարություն,շրջապատող իրականության երևույթներ, իրադարձություններ)
- Ուսուցման սկզբունքի ընտրություն
- Ինտեգրման մեթոդի ընտրություն
- Հստակություն,հետևողականություն
- Երեխաների կարողությունների և գիտելիքների գնահատման ընդհանուր մոտեցում:

1.1 Թեմատիկ միավորի պլանավորում

Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում, ինտեգրում՝ 1 հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավորներ ծրագրի տարբեր բաժիններից: Այն հնարավորություն է տալիս դաստիարակին ծրագիրը կազմել երեխաներին հետաքրքրող թեմաների, խնդիրների շուրջ: Թեմատիկ ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել.

- Թեմայի համապատասխանություն երեխաների հետաքրքրություններին
- Նրանց երևակայական և ստեղծագործական մտածողության խթանմանը
- Երեխաների մասնակությանը, համագործակցությանը
- Գիտելիքի հարստացմանը՝ առարկաների, մարդկանց և շրջապատում կատարվող իրադարձությունների վերաբերյալ:

Ուստի թեմատիկ պարապմունքներում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են համագործակցություն, հնարամտություն, ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն: Այն ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և էսթետիկական ոլորտների համակողմանի զարգացումը, որը չի սահմանափակվում մեկ առանձնացված ոլորտով: Թեմատիկ ուսուցման ժամանակ կազմվում է պլան, որտեղ կարելի է օգտագործել օրացույցներ՝ շաբաթվա կամ ամսվա դա կապված է, թե ինչ ժամանակահատվածի համար է նախատեսված կարևոր աշխատանքները և իրադարձությունները նշելու համար:

Կարելի է կազմել նաև աղյուսակներ, որտեղ կենտրոնում աշխատանքային կենտրոնի անվանումն է, իսկ առաջին ուղղաձիգ տողում՝ ամսաթիվը, իսկ համապատասխան վանդակներում՝ գործունեության տեսակները: Կազմվում է նաև անհատական պլան՝ հատուկ նպատակներ և նախասիրություններ ունեցող երեխաների զարգացումը ապահովելու համար: Պլանավորման եղանակ է նաև ցանցաձև գծապատկերումը, որը սխեմա է, որտեղ ներկայացնում են թեմաների և աշխատանքային կենտրոնների միջև եղած կապը: Գրավոր պլանները օգնում են համակարգել աշխատանքը:

Ինտեգրված ուսուցման կարևորությունն այն է, որ շեշտը դրվում է երեխայի կարողունակահեն կրթության վրա, որը նկարագրում է երեխայի զարագացման և կրթության վերջնարդյունքները: Ծրագրային բոլոր բաղադրիչներն ուղղված են ոլորտային վերջնարդյունքի ապահովմանը, որոնք էլ միտված են առանքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացման նախադպրոցական տարիքի ավարտին:

Նախադպրոցական տարիքի ավարտին սանից ակնկալվող կարողունակություններն են՝

- **Լեզվական և հաղորդակցման**
- **Ճանաչողական և մոտիվացիոն**
- **Ինքնաճանաչողական և սոցիալական**
- **Ժողովրդավարական և քաղաքացիական**
- **Թվային և մեդիա**
- **Մշակութային**
- **Մաթեմատիկական և տեխնիկական**
- **Տնտեսական**
- **Ֆիզիկական կուլտուրայի**

1.2 Ինտեգրման ուսուցման արժեքը

Ուսուցման կազմակերպման մեջ ինտեգրումը նկարագրվում է Ս. Մ Գապենկովի և Գ. Ֆ. Ֆեդորեթսի գրվածքներում:Այլ գիտնականներ ևս սահմանել են մանկավարժության գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ:Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում:

<<Ինտեգրում>>(integz-ամբողջ) լատիներենից թարգմանաբար նշանակում է վերականգնում, համալրում, մասերի միավորում 1 ամբողջի մեջ, ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում ինչպես արդեն նշվել է, օգտագործվում է ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:Տարբեր ոլորտներից վերցված բաղադրիչները ,որոնք միավորվում են մեկ պարապմունքի մեջ, կազմում են մեկ համակարգ, որը հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար:Այսինքն, որպես միավոր առանցք հանդես է գալիս որևէ թեմա, որն ընդգրկում է մի քանի բաժիններ:Դրա համար դաստիարակը նշում է ինտեգրված պարապմունքի նպատակը, համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը, ինտեգրման ձևը, նյութի հաջորդականության կառուցվածքը, ներկայացման ձևերը:

Ինտեգրված պարապմունքները կարող են լինել՝

1. Միջառարկայական-իրականացվում է երկու տարբեր բաժինների մեջ(օրինակ՝ խոսքի զարգացում- նկարչություն, մաթեմատիկա-երաժշտություն և այլն)
2. Բազմառարկայական- իրականացվում է երկու և ավելի բաժինների միջև(օրինակ՝խոսքի զարգացում- մաթեմատիկա- էկոլոգիա)
3. Անդրառարկայական- իրականացվում է մասնագիտական նորության ժամանակ(օրինակ՝ միևնույն թեման տարբեր խմբերի ծրագրերով համադրելիս):

Ինտեգրված պարապմունքները կարողունակահեն են, այսինքն վեր են հանում երեխայի կարողունակությունները: Երեխան դառնում է հետաքրքրված և նրան տրվում է և՝ գիտելիք, և՝ հետաքրքրություն:

Գլուխ 2 Պարապմունքների կազմակերպումը

Երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն են զբաղեցնում պարապմունքները, որոնց ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորն են յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Պարապմունքները տարվում են երկու ձևով.

ա) համընդհանուր ուսուցման ձևով, որը կստարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ

բ) մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով

Թեմաների զարգացումը ,նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել ՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները՝ օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք:Պարապմունքները հնարավորություն են տալիս երեխայի՝

- Բացահայտել իր ստեղծագործական ունակությունները ,
- բավարարել հետաքրքրությունները,
- հետազոտել, ուսումնասիրել:

Պարապմունքի պլան

Թեմա «Սննդամթերք»

Ենթաթեմա «Առողջ և անառողջ սնունդ»

Տեսակը՝ ինտեգրված

Խումբ՝ միջին

Տևողությունը՝ երկու պարապմունք

Նպատակը՝

- Ծանոթացնել առողջ և անառողջ սննդամթերքի տեսակներին, նրանց օգտակարությանն ու պատճառած վնասին
- Զարգացնել մտածողությունը, կապակցված խոսքը
- Հարստացնել բառապաշարը նոր բառերով՝ սննդամթերթ, օգտակար,վնասակար, առողջ, անառողջ
- Խորացնել գիտելիքները մրգերի և բանջարեղենի անվանումների մասին
- Խրախուսել առարկաների ուսումնասիրման ինքնուրույն փորձերը(խմբավորել)

Վերջնարդյունքները՝

- Կձևավորվի պատկերացում օգտակար և վնասակար սննդի մասին
- Կզարգանա մտածողությունը, խոսքը
- Կզարգանա խմբով աշխատելու և հարցերին պատասխանելու կարողությունը
- Կնպաստի գիտելիքների ամրապնդմանը
- Կընտրի և կօգտագործի տարբեր գույներ
- Կանվանի տարբեր առարկաներ
- Մեթոդներ՝ մեծ խմբով, փոքր խմբով, փոխգործուն, անհատական

Անհրաժեշտ նյութեր՝ պաստառ՝ օգտակար և վնասակար սննդամթերքի պատկերով, կարմիր և կանաչ թղթե զամբյուղներ, փոքրիկ նկարներ

Նյութեր՝ գործնական աշխատանքի համար.

A4 թղթեր՝ ստվերապատկերով, ջրաներկ, գունավոր մատիտներ, վրձին

Ծեփոն՝ մրգերի և բանջարեղենի հարթ պատկերներ ծեփելու համար(հարթաքանդակ)

<<ուրախ>> և <<տխուր>> ատամիկների պատկերներ, փոքր չափսի նկարներ՝ սոսնձելու համար

Մրգերի և բանջարեղենի քարտեր, կրկնօրինակներ

Ընթացքը- Երեխաները նստած են կիսաշրջանաձև:

-Դաստիարակ- Երեխաներ, ինչպես գիտեք ձեր ընկերը՝ Լևոնը, երկար ժամանակ չէր հաճախում մանկապարտեզ, քանի որ հիվանդ էր: Բժիշկը նրան նշանակել է օգտակար և վիտամիններով հարուստ սնունդ: Նա ուզում է չհիվանդանալ, որ

կարողանա խաղա, երգի, պարի, ուրախանա ձեզ պես և միշտ հաճախի մանկապարտեզ: Օգնենք նրան:

-Երեխաներ- Այո:

-Դաստիարակ- Այսօր նա մանկապարտեզ է եկել իր փոքրիկ ուսապարկով, եկեք տեսնենք ինչ կա նրա մեջ:

-Դաստիարակը ուսապարկից հանում է՝ գազավորված ըմպելիք, չիպսեր, կոնֆետներ:

-Դրա համար էլ նա շուտ էր հիվանդանում: Կարե՞լի է սնվել նման սննդով: Երեխաները պատասխանում են՝ ոչ:

- Դաստիարակ- Իհարկե ոչ, դրանք վնաս են պատճառում առողջությանը: Եկեք նայենք պաստառին և տեսնենք, թե՞ ինչեր են պատկերված: Երեխաները անվանում են պատկերված նկարները՝ գազար, բազուկ, խնձոր, միս, կաթ, ձու և այլն:

-Դաստիարակ- Այո և դրանց մենք անվանում ենք օգտակար, առողջ սնունդ: Իսկ ինչու՞ օգտակար, որովհետև պարունակում են վիտամիններ, որոնց շնորհիվ կարողանում ենք լավ տեսնել, առողջ են լինում ատամները, սիրտը լավ է աշխատում, ոսկորներն են ամրանում:Ու մենք դառնում ենք ուժեղ և չենք հիվանդանում: Եկեք պաստառին նայելով, գտնենք այն մթերքը, որը ձեզ տալիս են մանկապարտեզում: (Երեխաները նշում են): Երեխաներ, սեղանին դրված են թղթից պատրաստված զամբյուղներ և ես նրանք կփակցնեմ գրատախտակին: Ի՞նչ գույների են զամբյուղները:

-Երեխաները նշում են գույները՝ կարմիր և կանաչ:

- Այո, կարմիր և կանաչ:Ինչպես տեսնում եք կարմիր զամբյուղի վերևում փակցված է տխուր արև, իսկ կանաչի վերևում՝ ուրախ: Դրանք օգտակար և վնասակար սնունդի զամբյուղներն են:Սեղանին ունենք նաև նկարներ:Եկեք փորձենք անվանել նկարում պատկերվածը և տեղադրենք համապատասխան զամբյուղում:Պատրա՞ստ եք:

-Այո:

Դիդակտիկ խաղ՝ << Օգտակար և վնասակար սնունդ>>

-Երեխաները հերթով մոտենում են, վերցնում ցանկացած նկար և տեղադրում:

-Դաստիարակ- Ապրեք, դուք շատ լավ կատարեցիք ձեր առաջադրանքը:Եկեք մի քիչ հանգստանանք:

Ֆիզ. Դադար- Ես ասում եմ մթերքի անուն, եթե օգտակար է, ձեռքերը բարձրացնում եք վեր, եթե վնասակար՝ նստում եք աթոռին: (Թվարկել՝ կաթ, ձուկ, հոդ- դոգ, խնձոր, բազուկ, գազավորված ըմպելիք և այլն): - Կեցցեք, շատ լավ կատարեցիք: Հիմա ես կկարդամ առողջ սնվելու կանոնները, եթե համաձայն եք ինձ հետ, ծափահարեք, եթե ոչ՝ դոփեք ոտքերով:

-Ճաշից առաջ պետք է ձեռքերը լվանալ օճառով և հետևել ճիշտ լվացվելու կանոններին:(ծափահարում են)

-Պետք է ուտեք, երբ ուզում եք և ինչքան ուզում եք(դոփում են ոտքերով)

-Մնունդը պետք է կուլ տալ առանց ծամելու(դոփում են ոտքերով)

- Պետք է ուտել օգտակար սնունդ(ծափահարում են)

-Կարելի է ուտել տապակած սնունդ և խմել գազավորված ըմպելիք(դոփում են ոտքերով)

-Պետք է միրգը, բանջարեղենը լավ լվանալ, նոր օգտագործել(ծափահարում են)

-Դաստիարակ- Ապրեք, դուք շատ լավ հասկացաք որն է օգտակար, որը՝ոչ:

-Եկեք ասենք, թե ինչ իմացանք այսօր:

-Ինչը ձեզ դուր եկավ: Կարողացանք օգնել Լևոնին և ձեզ: Ինչի՞ մասին կպատմենք ծնողներին և ձեր ընկերներին:(թեմայի ամփոփում)

Մենք փոքրիկ ենք ու մեզ պետք են բազմատեսակ վիտամիններ,
Որ մենք ուտենք ու մեծանանք,
Միշտ առողջ ու ուրախ մնանք:
Ահա ՝ նարինջ ու մեջը՝ << ցե>>,
Ահա պղպեղ ու մեջը՝ << բե>>,
Ահա գազար ու մեջը՝<<Ա>>,
Մենք ձեզ շատ ենք սիրում, բա՞:

Աշխատանք կենտրոններում

-ներկել նախապես նկարված բանջարեղենը համապատասխան գույներով

- ծեփել խնձորներ(հարթաքանդակ)

-առողջ և հիվանդ ատամիկների թղթերի վրա սոսնձել համապատասխան նկարները

-դասավորել մրգերի և բանջարեղենի քարտերը, անվանել - խմբավորել մրգերի , բանջարեղենի և այլ մթերքների խաղալիքները, անվանել, հաշվել

- Կտրտել մրգերը՝ օգնականի օգնությամբ և հյուրասիրել ընկերներին:

Դիտարկում

Պարապմունքը դիտարկեցին՝ տնօրեն Աննա Մարգարյանը և դաստիարակ Հերմինե Ձամալյանը: Նրանց կարծիքը գրում եմ ստորև. << Պարապմունքը երեխաներին հնարավորություն տվեց լինել հետաքրքրված, լինել թեմայի մեջ, որը նրանց տվեց և գիտելիք, և հետաքրքրություն: Երեխաները կարողացան արտահայտվել, ազատ կողմնորոշվել, հաստատվեց երկխոսություն, համագործակցություն, ուսուցումը երեխայակենտրոն էր: Տիրում էր փոխըմբռնման մթնոլորտ, բոլորը ներգրավված էին: Ուսուցումը կազմակերպված էր համագործակցային մթնոլորտում, որտեղ երեխան և դաստիարակը նույն հարթության վրա էին: Դաստիարակը ուղղորդող էր և ավագ ընկեր: Երեխաներն ունեին խոսքային ակտիվություն, ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն, կարողանում էին ծավալել ակտիվ գործունեություն: Պարապմունքը իր կառուցվածքով ինտեգրված էր, բազմաբնույթ, հագեցված, ստեղծված էր համապատասխան միջավայր:

Եզրակացություն

Այսպիսով, կրթության բովանդակային ինտեգրումը հնարավորություն է տալիս վերանայել տարբեր առարկայական համակարգերի փոխկապակցումը: Ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը, նպաստում է պրակտիկ գործունեության կատարելագործմանը, որոնց օգնում են բովանդակալից մոտեցումն ու նոր մեթոդների կիրառումը: Ինտեգրված պարապմունքը իր բնույթող զարգացնող է, որի առանցքը մեկ թեմա է և ընդգրկում է մի քանի առարկա:

Հավելված

Գրականություն

Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ:

Նախադպրոցական կրթության միջին խմբի կրթական ծրագիր

Վիքիպեդիա

<<Ինտեգրումը կրթական գործընթացում>> Տ. Փնջոյան 2018թ.

Լալա Սմբատյան <<Նախաշավիղ>> 2015թ.

<<Նախաշավիղ>> 2016թ. Համար 2

Հ. Միտոյան, Լ. Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար 2010թ.

Рыжова « Развитие речи в детском саду»